# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

| | | |
|---|---|---|
| 2. | Աշխատանքի անվանումը | Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի կենտրոնական զբոսայգու բարեկարգում |
| 3. | Ընդհանուր նկարագրություն | Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի կենտրոնական զբոսայգու բարեկարգում<br>Նախկինում չի կատարվել հիմնանորոգման աշխատանքներ և տեխնիկական վիճակի ուսումնասիրություն |
| 4. | Ներկայացվող հիմնական պահանջներ, տեխնիկական առաջադրանք | Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի կենտրոնական զբոսայգու բարեկարգում<br>Քանդման աշխատանքներ<br>-եզրաքարերի քանդում<br>-առկա հին բետոնի քանդում<br>-տարածքի հարթեցում<br><br>Նորոգման աշխատանքներ<br>- Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի կենտրոնական զբոսայգու բարեկարգում: Բնահողի տեղափոխման աշխատանքներ, ճեմուղու կառուցում Ց/Բ սալիկներով (ծածկույթի նյութի և գույնի ընտրությունը համաձայնեցվում է պատվիրատուի հետ) և 20*10 բազալտե եզրաքարերով սահմանափակված, 6 նստարանների ու աղբամանների տեղադրում, 2 տեսակավորման աղբամանների տեղադրում, կանաչապատման աշխատանքների իրականացում, 3 մ տրամագծով շատրվանի կառուցում (ձևի և գույնի ընտրությունը համաձայնեցվում է պատվիրատուի հետ), մանկական խաղահրապարակի և սպորտային հրապարակի կառուցում, գիշերային լուսավորության կառուցում (տեսակի և գույնի ընտրությունը համաձայնեցվում է պատվիրատուի հետ), ջրամատակարարման, ջրահեռացման և ոռոգման համակարգի կառուցում |
| 5. | Ընդհանուր դրույթներ | Աշխատանքային նախագիծը կազմվում է՝<br>ՀՀ կառավարության 19.03.2015թ. թիվ 596-Ն որոշմամբ «ՀՀ կառուցապատման նպատակով թույլտվությունների և այլ փաստաթղթերի տրամադրման կարգը հաստատելու և ՀՀ կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» պահանջներին համապատասխան, ճարտարապետահատակագծային և նախագծման առաջադրանքներին, թերությունների ակտին համապատասխան:<br>Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ.-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերը ներկայացվում են փորձաքննության դրական եզրակացությամբ՝ ,,,,, հազ. դրամ նախահաշվային արժեքով՝ նախագծողի և փորձաքննություն իրականացնողի միջև կնքված պայմանագրի համաձայն:<br>Նախատեսվում է հեղինակային հսկողություն, նախագծողը իրականացնում է հեղինակային հսկողություն աշխատանքների կատարման ողջ ընթացքում:<br>ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի թիվ 526-Ն որոշման համաձայն նախագծողը՝<br>ա/նախագծման համար հիմք հանդիսացած նյութերի տեխնիկական բնութագրերը կազմում է <<Գնումների մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի պահանջներին համապատասխան,<br>բ/ ներկայացնում է կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի /կոնստրուկցիաներ և այլն/ և օգտագործված նյութերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող նվազագույն պահանջները,<br>գ/ ներկայացնում է շինարարական ծրագրերի կատարման համար անհրաժեշտ լիցենզիային, տեխնիկական միջոցներին և աշխատանքային ռեսուրսներին ներկայացվող պահանջները,<br>դ/ նախագծնախահաշվային փաստաթղթերը ներկայացնում է պատվիրատուին թղթային՝ 4 օրինակից և էլեկտրոնային տարբերակներով,<br>ե/ ներկայացնում է ըստ առանձին աշխատանքների կատարման օրացուցային գրաֆիկը,<br>ինչպես նաև, ներկայացնում է աշխատանքների կատարման ծավալաթերթ՝ էլեկտրոնային տարբերակով, որի յուրաքանչյուր աշխատանքի միավորի արժեքը կներառի ՀՀ քաղաքաշինական նորմատիվ փաստաթղթերով սահմանված բոլոր ծախսերը, շահույթը, ինչպես նաև բոլոր տուրքերը, վճարները և հարկերը՝ առանց նախատեսված վերադարձի գումարի, կնքված և ստորագրված նախագծողի կողմից (այդ թվում հաշվի առնել չնախատեսված աշխատանքների և ծախսերի 50%):<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմված են 2 մասից՝<br>**-Ճարտարապետաշինարարական մաս**. Ներառում է<br>Ելակետային տվյալներ և նախագծային փաստաթղթեր //հատակագիծ / լուսապատճեն/, տեխնիկական բնութագիր,ճարտարապետահատակագծային առաջադրանք,լիցենզիա /քաղաքաշինական փաստաթղթերի մշակման բնագավառ՝ բնակելի,հասարակական և |

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

| | | |
|---|---|---|
| | | արտադրական ոլորտ/,տեխնիկական վիճակի հետազննության եզրակացություն /ըստ անհրաժեշտության/,ընդհանուր բացատրագիր, հատակագծեր,շինարարության և քանդման կազմակերպման նախագծեր,հիմնական շինարարական նյութերի,կոնստրուկցիաների ամփոփագրեր,մասնագրեր,աշխատանքների կատարման ուղեցույց, աշխատանքների կատարման ժամանակացույց, աշխատանքային գծագրեր, աշխատանքային ծավալներ/, բացատրագրեր,<br>-**Նախահաշվային մաս՝** ամփոփ, օբյեկտային, լոկալ նախահաշիվներ<br>Վերանորոգման աշխատանքների ընթացքը համապատասխանեցվում է պատվիրատուի հետ:<br>Աշխատանքային նախագծի ընդհանուր փաթեթը ներկայացնել հայերեն լեզվով:<br>Նախագծանախահաշվային փաստաթղթերը պետք է պատրաստված լինեն համակարգչային համապատասխան ծրագրերի կիրառմամբ, ընթեռնելի: |
| | ***Հիմնական պարփականություններ և պահանջներ*** | ***Հիմնական պարփականություններ՝***<br>1.հետազննման աշխատանքների իրականացում,<br>2.նախագծանախահաշվային փաստաթղթերի կազմում,<br>***Հեփազննման վերաբերյալ պահանջներ՝***<br>• հետազննումն իրականացնել նախագծային փաստաթղթերը մշակելու անհրաժեշտ ծավալով,<br>• հետազննման ընթացքում իրականացնել Մեղրի համայնքի Ագարակ քաղաքի կենտրոնական զբոսայգու և հարակից տարածքի առկա վիճակի տեսանկարահանում:<br>***Նախագծի նկափմամբ պահանջներ***<br>• Նախագծային փաստաթղթերը պետք է համապատասխանեն ՀՀ պետական ստանդարտներին, հրահանգներին, քաղաքաշինական նորմերին:<br>• Նախագծի մեջ պետք է նախատեսել առնվազն հետևյալ աշխատանքները՝<br>***Համաձայնեցումներ՝***<br>• քաղաքաշինական պարզ փորձաքննության եզրակացությունը պետք է լինի դրական,<br>• նախագծային լուծումները համաձայնեցնել տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ,<br>• տեղական ինքնակառավարման մարմնի ղեկավարի հետ համաձայնեցնել շինարարական աղբի տեղերը |
| | ***Նորմափիվային պահանջներ*** | • Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել քաղաքաշինական նորմերի պահանջներին համապատասխան:<br>• Նախահաշիվը կազմել ՀՀ կառավարության 23.06.2011թ-ի թիվ 879-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան:<br>• Նախագծանախահաշվային փաստաթղթերը կազմել համաձայն ՀՀ-ում գործող նորմատիվային փաստաթղթերի: |

Կազմող Մկրտիչ Մկրտչյան

Մեղրի համայնքի ղեկավար՝ Խաչատուր Անդրեասյան